



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 24 (367)

**Կախարհերի
գլխին սարին բոլոր
ամոլ է նստում...**

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅ



ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի կունենա Սյունուօրհնների արարողություն:

Սյունու բառը եւ Սյունուի խորհուրդը դարեր ի վեր հոգեհարազատ է եղել մեր ժողովրդին՝ պարգևելով միայն բարի, ազնիվ զգացումներ ու սրբազան սարսուռներ քրիստոսապաշտ հայի հոգուն: Սյունու հունարեն ծագում ունի եւ նշանակում է «անուշ յուղ», «օծանելիք», «հոտավետ հեղուկ» կամ «բուրոլ հյութ»: Հնուց ի վեր մարդիկ օծել են իրենց անուշահոտ յուղերով՝ դրան տալով զանազան նշանակություն: Յուղով օծվելը նշան էր մաքրության, ազնվականության, ցնծության, հաղթանակի, հարստության, մեծարանքի, խաղաղության, սիրո, սրբության: Այն նաեւ առողջարար էր, վերքերի եւ կտորվածքների, այլեւայլ ախտերի լավագույն դարման:

Բուն մյուռնի՝ որպես սրբացնող ու նվիրագործող օծման յուղի մասին տեղեկություններ ստանում ենք «Աստվածաշունչ» մատյանից: Սյունուի տարբեր կիրառությունների մասին հիշատակություններ կան եւ Հին, եւ Նոր կտակարաններում: Հին կտակարանում Աստված հրամայում է Մովսեսին որոշակի բաղադրությամբ օծման սուրբ յուղ պատրաստել եւ դրանով նվիրագործել քահանաներին, զոհասեղաններն ու ընծաները եւ պաշտամունքային ողջ սպասքը: Արգելվում էր տվյալ բաղադրությամբ յուղի առանց գործածությունը: Հետագայում այդ յուղով օծում էին նաեւ արքաներին՝ որպես նշան Աստծուց ստացած իշխանության: Դավիթ թագավորը՝ մարգարե ու սաղմոսերգու, մյուռնու անվանում է ուրախության յուղ, իսկ Սողոմոնի Երգ երգոցում կարդում ենք Փեսայի մասին: «Քո անունը թափված յուղ է անուշ»:

Նոր կտակարանում օծության յուղը կիրառվում է որպես պատվի եւ մեծարանքի նշան, բժշկության եւ սրբության նշան:

Հայ իրականության մեջ մյուռնու մուտք է գործել քրիստոնեության առաջին ավետարանիչների՝ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի շնորհիվ: Հետագայում հաստատվել է նաեւ մյուռնու պատրաստման եւ օրհնության կարգը, եւ այդ սրբությունը սրբոցը հասել է մինչեւ մեզ՝ իրենով ներծծված մեր հավատքի ու մաքառումների շնորհիվ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում մյուռնու ավանդաբար պատրաստում են ձիթեմու ձեթից, բալասանից եւ շուրջ քառասուն անուն հոտավետ, յուղատու բույսերի տարբեր մասերից: Սյունուի օրհնության համար կարելու է 40 տեսակների գործածությունը: «40-ը պապաշարությանը առաքելության բացվելու խորհրդանիշն է»: Սյունու պատրաստելու համար նախապես հավաքված եւ Վեհափառի կողմից հատուկ օրհնված հունքը փոշիացնում են, մաղում, խառնում իրար ու եփում են երկու օր՝ անընդհատ խառնելով, ամբողջ գործընթացն ուղեկցվում է պատշաճ աղոթքներով, սաղմոսերգությամբ եւ հոգատարությամբ: Այնուհետեւ, եւս երկու օր պահելուց հետո, որպեսզի նստվածք տա, եփված զանգվածը քանում են: Չտման աշխատանքները վերջացնելով՝ Սրբալույս Սյունուի կաթսան, սաղմոսերգությամբ եւ շարականների երգեցողությամբ տեղադրվում է Մայր տաճարի Ավագ խորանի աջակողմում:

Հերթական անգամ Քաջարանի երկինքը երկնաերանգվեց տոնական հրավառության գույներով

Ավանդույթի համաձայն՝ օգոստոսի 21-ին նշվեց Քաջարան քաղաքի տոնը՝ բնակավայրին քաղաքի կարգավիճակ շնորհելու 57-րդ տարեդարձը: Մինչեւ տոնակատարությունը սկսվել քաղաքային համայնքի ղեկավար Վարդան Գեւորգյանը կազմակերպել էր ընդունելություն՝ ներկայացնելու անցած մեկ տարում Քաջարանում արված գործերը, նախանշելու ծրագրերն ու անելիքները: Ընդունելությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Գորիսի քաղաք-

քապետ Վաչագան Աղունցը, Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը, Քաջարանի պատվավոր քաղաքացի, Հայրենական մեծ պատերազմի վետերան Ստեփանոս Գեւորգյանը, համայնքի ավագանու անդամ Վազգեն Սահակյանը, Քաջարան քաղաքի եւ կոմբինատի զարգացմանը նպաստած անձինք, մարզկենտրոնի եւ Քաջարանի տարածաշրջանի դպրոցների տնօրեններ: Հնչեցին շնորհավորանքներ, բարեմաղթանքի խոսքեր, անկեղծ գրույց ծայր առավ քաղաքի եւ նրա մարդկանց

մասին, նաեւ առաջարկ եղավ Քաջարանի փողոցներից մեկը վերանվանել Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի վաստակաշատ տնօրեն, Քաջարանի պատվավոր քաղաքացի Ֆրունզե Պետրոսյանի անվամբ:

«Ֆրունզե Հնայակիչն այն մարդն էր, ով մեծ լույս ունի թե քաղաքի, թե կոմբինատի զարգացման գործում: Ինձնուսականների սկզբին, երբ որոշ տաքզուխներ պայքարում

էջ 6

ՎԱԶԱԳԱՆ ԱՂՈՒՆՅ. «Տիրոջ զգացում ունենալը դրական արդյունքներ կտա»

Հարցազրույց Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի հետ

– Պարոն Աղունց, մեկ տարուց մի քիչ ավելի ժամանակ է անցել Ձեր պաշտոնավարությունից, մի տարվա հեռավորությունից գնահատելով եւ ամփոփելով արվածը, այնուամենայնիվ, ի՞նչ բացթողում եք արել, ո՞ր թերությունը կշտկեիք:

– Ասեմ, որ անցած մեկ տարում ավելի շատ պլաններ ենք մշակել, ավելի շատ ծրագրեր ենք նախանշել, նաեւ նախնական պայմանավորվածություններ ձեռք բերել, համաձայնագրեր ստորագրել ամենատարբեր կառույցների, անհատ մարդկանց հետ: Այս վերջին մեկ տարում հիմնական շեշտը դրել են այն բանի վրա, որ գործիքների մեջ ավելի խոր արմատներ

ծփ տիրոջ զգացումը: Չգտել են բոլորին համոզել, որ ոչ միայն քաղաքի ղեկավարները պետք է քաղաքի հոգսերով ապրեն, այլեւ յուրաքանչյուր գործիքի: Խնդիրն այն է, որ ոչ մի բարեկարգում կամ սամաքում դրական արդյունք չի կարող տալ, եթե ըստ ամենայնի չպահպանվի արվածը:

Երկրորդ՝ ձգտել են քաղաքացիներին տներին հանել: Ինչ-որ բան հաջողվել է, երեւի: Յուրաքանչյուր գնահատական կուզեի բնակիչները տալին: Ամեն դեպքում տեսնում են, որ բնակիչներին տներին հանելու գործընթացը ստացվել է: Քաղաքում բազմաթիվ միջոցառումներ են անցկացվել: Նույնիսկ ինքս,



երբ կարդացի քաղաքապետարանի գործունեության մեկ տարվա հաշվետվությունը, հաճելիորեն զարմացա: Դա նպաստել է, որ

էջ 4

էջ 2

Ամասն չմնացին մեդալներից



Հանրապետության տպագիր մամուլի մեծամասնությունը, ինչպես նաև «Այունյաց երկիրը», արձակուրդում էր, երբ օգոստոսի 2-12-ը տեղի ունեցան համահայկական 6-րդ խաղերը: Խաղերի մարզական ջախը վառեց հայկական սպորտային մարմնամարզության լեգենդ, օլիմպիական չեմպիոն Ալբերտ Ազարյանը: Խաղերի ծրագրով անցկացվեցին մրցումներ 17 մրցաձևից, խաղարկվեց մեդալների 105 հավաքածու: Սյունիքի մարզը եւս անմասն չմնաց խաղարկվող մեդալներից: Եռացատկի հատվածում անգերազանցելի էր կապանցի թեթև ատլետ Լեւոն Աղասյանը (մարզիչ՝ Արսեն Պետրոսյան), հեռացատկում Լեւոն Երկրորդը էր: Պատվո պատվանդանի երկրորդ աստիճանին կանգ-

նեց եռացատկորդուհի Հայկանուշ Բեկարյանը: Վերջնագիծը երկրորդը հատեցին կապանցի աղջիկների 4x100մ եւ 4x400մ փոխանցումավազքի քառյակները՝ արժանանալով արծաթե մեդալի: Երրորդ մրցանակի արժանացան Իրինա Գրիգորյանը (հեռացատկ) եւ Վարդան Նիկողոսյանը (եռացատկ, մարզիչ՝ Արսեն Պետրոսյան):

Համահայկական խաղերում իրենց բարձր կարգը հաստատեցին Սիսիանի վոլեյբոլիստուհիները: Լոդափմյա վոլեյբոլում ոսկե մեդալի արժանացավ ծով ու լողափ չունեցող Սիսիանի կանանց թիմը՝ Սարիա Հովհաննիսյան, Նարե Հովհաննիսյան կազմով (մարզիչ՝ Աղվան Հակոբյան), իսկ Սիսիանի աղջիկների վոլեյբոլի թիմը (մարզիչներ՝ Աղվան

Հակոբյան, Ռազմիկ Սուլթանյան) գրավեց երրորդ տեղը եւ արժանացավ բրոնզե մեդալի:

Համահայկական խաղերի ծրագրում առաջին անգամ ընդգրկվել էին սպորտային պարերը, եւ իրենց լավագույն կողմերով դրսևորեցին սիսիանցիները: Էրիկ Գրիգորյան-Մանե Ստեփանյան զույգն արժանացավ արծաթե, Տիգրան Ավաբեկյան-Մերի Ամիրխանյան զույգը՝ բրոնզե մեդալների (մարզիչ՝ Արման Դավթյան):

Համահայկական 6-րդ խաղերը փակվեցին օգոստոսի 12-ին, որի ընթացքում մրցանակներ հանձնվեցին տարբեր անվանակարգերում, այդ թվում՝ թագադրվեց խաղերի գեղեցիկը ճանաչված մարզուհին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գորիսը՝ «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ

Երեւանից եւ Էջմիածնից հետո Սյունյաց լեռնաշխարհի գեղատեսիլ քաղաքն իր պատվավոր տեղը գտավ համաշխարհային հայտնի 250 քաղաքների կողքին: Այդ առիթով Գորիսը իյուրեր ուներ, ովքեր եկել էին անդամակցության հավաստագիրն ու դրոշը հանձնելու քաղաքատարարին: Քաղաքապետ Վաչագան Աղունցը, կարեւորելով այս համագործակցությունը եւ այն համարելով պատմական իրադարձություն, պատրաստակամություն հայտնեց ամեն ինչ անել ձեռք բերվածը պահելու եւ զարգացնելու համար: «Այս անդամակցությունը մեծ ձեռքբերում է եւ պարտավորեցնող: Մենք առաջին հերթին պարտավոր ենք ոչ միայն ավելի լավ պահպանել մեր պատմական արժեքները, այլեւ զարգացնել եւ փոխանցել մեր սերունդներին: Միաժամանակ այս համագործակցությունը հնարավորություն է ընձեռում շփվելու աշխարհի ամենահայտնի քաղաքների հետ եւ փորձի փոխանակում իրականացնել: Հատկապես շեշտադրություն կարվի զբոսաշրջության զարգացման վրա», - նշեց քաղաքապետը:

Արմատներով գորիսեցի, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանը հպարտությամբ էր այցելել Կապուպապերի երկիր: Այցը համարելով մեծ բարեբախտություն՝ պրոֆեսորն աջալույս տվեց գորիսեցիներին՝ հզոր քաղաքների կողքին այսօր

արդեն իր դիրքն ամրապնդած, հայ մշակույթում բացառիկ վաստակ ունեցած, Ա.Բակունց. Ս.Խանգաղյան, Ս.Այվազյան, Գուսան Աշոտ տված Գորիս քաղաքի ներկայության առթիվ: Կանադայի Մոնրեալ քաղաքում գործող Միջազգային ինֆորմատիկացիայի ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Ազատ Վարդանյանի կարեւորագույն նպատակն է Հայաստանը ներկայացնել աշխարհին, որի արդյունքն այսօր արդեն տեսանելի է: Պրոֆեսորը սուբյեկտիվորեն Գորիսն անվանեց Սյունիքի մայրաքաղաք եւ տեղեկացրեց, որ այն ընտրվել է չքնաղ բնության եւ պատմական մեծ արժեքները պահպանելու շնորհիվ:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի մեծագույն ջանքերով իրականացված այս նախաձեռնությունն արդեն գործնական բնույթ ստացավ: Այցի շրջանակներում Գորիսում գտնվող գեղանկարիչ Շնավոն Շնավոնյանը շուտով իր ցուցահանդեսը կբացի Գորիսում, իսկ ԱՄՆ-ում հայտնի գործարար, մեդվաբույժ Վրեժ Սարյանն իր համագործակցությունը կշարունակի գորիսեցի մեդվաբույժների հետ:

Ի դեպ՝ «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հիմնադրամատուցողն էր համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման հռչակագիրը է:

ԱՐԵՎԻԿ ԱՐԵԼՅԱՆ

Ամերիկյան մշակութային շրջագայություն՝ մարզում



Հայաստանում ԱՄՆ դեսպանատան նախաձեռնությամբ եւ աջակցությամբ «Ամերիկյան մշակութային շրջագայություն-2015» ծրագրի շրջանակներում մարզի որոշ քաղաքներում «Հովիվուդ նոն ստոպ» համերգային ծրագրով հանդես եկավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան):

Ինչպես ելույթի խոսքում նշեց ԳՂ-ում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի գրասենյակի ղեկավար ժաքլին Դիլին, ծրագիրը մեկնարկել է Սյունիքից եւ կտեւի երկու ամիս: Ծրագրի շրջանակներում, համերգներից բացի, նախատեսվում է կազմակերպել մշակութային այլ միջոցառումներ եւս, այդ թվում՝ երիտասարդ վավերագրողների ֆիլմերի ցուցադրություն:

Սեպտեմբերի 7-ին՝ Գորիսում, 8-ին՝ Կապանում, 9-ին՝ Մեղրիում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ (դիրիժոր՝ Ռուբեն

Սատրյան) հնչեցին Ջորջ Գերշվինի, Ջոն Վիլյամսի, Լեոնարդ Բերնսթայնի եւ այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները՝ հոլիվուդյան հայտնի ֆիլմերի սաունդթրեքները: Երաժշտությանը համընթաց համերգիստեսը հնարավորություն ուներ Էկրանին դիտելու համապատասխան ֆիլմերից հետաքրքիր հատվածներ:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց համերգի կազմակերպիչներին եւ նվագախմբին՝ հաճելի ակնթարթներ պարգևելու համար, իսկ նվագախմբի դիրիժոր Ռուբեն Սատրյանը, ողջունելով ներկայացրին, նշեց, որ Կապանը շանսավոր երաժիշտներ ծնած քաղաք է, եւ խոստացավ ավելի հաճախակի դարձնել երաժշտասերների հետ հանդիպումները:

Հանդիսատեսը եւս մեկ անգամ համոզվեց, որ աշխարհահռչակ լավագույն ֆիլմերի հաջողության գրավականը նաեւ նրանց համար գրված երաժշտությունն է:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ

Սյունուհի օրինությունը կատարվում է Մայր տաճարի բաց խորանում հանդիսավոր պատարագի ընթացքում: Վեհափառ Հայրապետը նոր մյուռոնին է ավելացնում վարդի յուղ, բալասան, անպայմանորեն նաեւ՝ հին մյուռոնից, որի մեջ ավանդաբար պարունակվում է առաքյալների եւ Լուսավորչի ժամանակների սրբալույս մյուռոնից, եւ մյուռոնի կաթսան պատշաճ աղոթքների, սաղմունների երգեցողության ուղեկցությամբ խառնում է Լուսավորչի աջով, Սուրբ Խաչի մատուցով, եւ ամբողջ հոգեւորականաց դասը երգում է օրինության շարականներ:

Հայոց մեջ մյուռոնի գործածության մասին գրավոր վկայության առաջին անգամ հանդիպում ենք Ազարիստեղի պատմության մեջ: «Երբ պահքը վերջացավ, երանելի Գրիգորը առավ երկրի գործը, (Տրդատ) թագավորին, նրա կնոջը՝ Աշխենին, մեծ իշխանուհուն՝ Խոսրովիդուխտին եւ բոլոր մեծամեծներին ու առավոտյան լուսաբացին եփրատ գետի ափը տարավ եւ այնտեղ մկրտեց ամենքին Հոր, Որդու եւ Ս. Հոգու անունով: Եվ երբ բոլոր մարդիկ եւ թագավորը եփրատ գետի ջուրը մտան մկրտության համար, սքանչելի նշան երեւաց Աստծուց,

որովհետեւ ջրերը կանգ առան եւ ետ դարձան: Սաստիկ լույս երեւաց լուսավոր սյունի մեծությունը եւ կանգ առավ գետի ջրի վրա Տերունական Խաչի պատկերը, ու այնքան շողաց, որ արեգակի ճառագայթները տկարացրեց: Եվ օծման յուղը, որ Գրիգորը թափում էր մարդկանց վրա, գետի մեջ շրջան անելով մարդկանց շուրջը պտտվում էր, եւ ամենքը զարմացած օրհնություն էին բարձրացնում Աստծո փառքի համար: Երեկոյան Խաչի նշանն ամերեւութանում է, եւ նրանք քաղաք են վերադառնում: Այդ օրը մկրտվողներն ավելի քան հարյուր հիսուն հազար էին արքունի բանակից»:

Այնուհետեւ, հաճախակիորեն տեսնում ենք յուղի կամ մյուռոնի գործածությունը Հայոց եկեղեցու մեջ, իբրեւ Սրբության Յուղ, Մկրտության Յուղ, Անուշ Յուղ, Օրհնության Յուղ եւ Օծման Յուղ: Եվ միայն Հովհան Օծնեցի Հայրապետն է առաջին անգամ գործածում մյուռոն բացատրությունը 720թ., Դվինի 5-րդ ժողովի 9-րդ կանոնում. «Ս. Մյուռոնը Հայրապետը պետք է օրհնի տարին մեկ անգամ եւ բաշխի եպիսկոպոսներին եւ քահանաներին, սեղան, եկեղեցի, խաչ օձելու եւ մկրտվածներին դրոշմելու համար»: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն

Սրբալույս Մյուռոնով օծվում են մկրտվող երեխաները, քահանաները, կուսակրոն հոգեւորականները, եպիսկոպոսները, կաթողիկոսները (բոլոր հոգեւորականները վերջին օծումով են թաղվում), եկեղեցիները եւ սրբապատկերները: Նախկինում նաեւ հայոց արքաներն էին օծվում: Ո՞րն է Մյուռոնի խորհուրդը.

Ա. Սրբալույս Մյուռոնը մարդկային մեղավոր հոգիները փրկության առաջնորդող այն դեղն է, որ բուժում է ախտը եւ մարդու կյանքի առաջնորդն է դառնում: Այն որդեգրության շնորհի հեղունակ է մարդու վրա, որով մարդուն բարձրացնում է առ Աստված եւ նրան դարձնում է որդեգիրն Աստծո լուսավոր արթնության: Մարդը, նրանով սրբվելով, հավիտենական հանգստին է արժանանում:

Բ. Սրբալույս Մյուռոնն այն շնորհն է, որով Աստված իրենից երկնջողներին դարձրեց Նոր Ուխտի պաշտոնյաներ, որպեսզի մարդիկ Քրիստոսի հոտը լինեն՝ «դառնալով թագավորներ ու քահանաներ, սուրբ ազգ եւ սեփական ժողովուրդ՝ իրենց վրա առնելով Քրիստոսի գորությունը»:

Գ. Սրբալույս Մյուռոնն այն կնիքն է, որով չարը հեռու է մնում մարդուց, որովհետեւ քանի դեռ Ս. Հոգին խորհրդանշող Մյուռոնը մեր մեջ է մնում, «կարիք չունենք ուրիշ մեկից սովորելու: Հոգին Ինքն է սովորեցնում ամեն բան, եւ սովորեցնում է ճշմարիտը, եւ ոչ թե սուտը» (Հովի. 2.27):

Տեր Ահարոն քին. Մելքումյան
Գորիսի փարաձառյալի հոգեւոր հովիվ

Սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ պատճառաբանությամբ են ազատում աշխատանքից կենսաթոշակառուներին

Ինչպես ամեն նոր տարվա սկզբին, այնպես էլ նոր ուսումնական տարվա շեմին հանրությանը հուզող առաջնային հարցերից է կենսաթոշակի անցնող անձանց աշխատանքից ազատումը, որ ոչ միանշանակ վերաբերում է արժանազանությանը: Առաջին հայացքից թվում է, թե օրինակաբար է սերնդափոխությունը, եւ 33 աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետում նշվում է. «Աշխատանքային պայմանագրի լուծման օրինակյալ պատճառ չի կարող համարվել... տարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը»:

Բայց մյուս կողմից էլ այս կետը կարելի է հակասահմանադրական համարել. 33 սահմանադրության 14.1-րդ հոդվածի 2-րդ մասը, ի թիվս այլ հիմքերի, սահմանում է խտրականության արգելք՝ կախված տարիքից: 33 սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է աշխատանքի ընտրության ազատություն, որը չի կարող սահմանափակվել 33 սահմանադրության 43 եւ 44-րդ հոդվածներով սահմանված հիմքերով: Հետեւաբար, «...աշխատանք ընտրելու ազատությունը պետք է բոլորի համար երաշխավորված լինի անկախ տարիքային սահմանափակումից: Կենսաթանակյալ այնպիսի գործուն, ինչպիսին մարդու տարիքն է, որն ինքնին միանշանակ չի կարող ներգործել տվյալ անձի աշխատանակության եւ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների վրա, ըստ դիմող կողմի, չի կարող դիտարկվել որպես աշխատանքից ազատելու հիմք, մինչդեռ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետն աշխատողի սոսկ տարիքին հաղորդում է աշխատանքը շարունակելու հնարավորությունը վերագնահատելու չափանիշի որակ, որն անընդունելի է, քանի որ բացառում է աշխատանքային հարաբերություններն անհատապես՝ կոնկրետ դեպքում կանոնակարգելու հնարավորությունը՝ պայմանավորելով այն ոչ թե աշխատողի աշխատանքային պայմանագրի տակալում հմտություններով, այլ միայն նրա տարիքով: Աշխատանակությունը կարող է նվազել նաեւ տարիքային գործոնից անկախ», – նշված է 33 սահմանադրական դատարանի 2011թ. հոկտեմբերի 11-ի որոշման մեջ՝ կայացված 33 կառավարության դիմումի հիման վրա՝ 33 աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ 33 սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

Վերոնշյալ որոշման մեջ անդրադարձնալով կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ աշխատանքային հարաբերությունների կարգավորման (հաստատման, դադարման) միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված միջազգային ակտերի, ինչպես նաեւ բազմաթիվ երկրների ներպետական օրենսդրու-

թյան համաձայն աշխատողի հետ հաստատված աշխատանքային հարաբերությունները չպետք է դադարեցվեն, եթե դրա համար առկա չէ աշխատողի ունակությունների կամ վարքագծի հետ կապված, ինչպես նաեւ ծառայության կամ գործունեության գործառնական պահանջների վրա հիմնված իրավաչափ պատճառ: Նման վիճակներից խուսափելու հիմնական նախադրյալն աշխատանքային պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունների հստակ իրավական կարգավորումն է: Վերջինս պահանջում է տարբերակել այդ հարաբերությունների բնույթն ու աշխատողի իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումը մինչեւ կենսաթոշակային տարիքի հասնելը եւ դրանց բնույթն ու առանձնահատկությունները կենսաթոշակային տարիքում: Բազմաթիվ երկրների աշխատանքային օրենսգրքերում կամ տվյալ իրավահարաբերությունները կանոնակարգող այլ ակտերում (Բուլղարիա, հոդվ. 72, Ֆինլանդիա, Աշխատանքային պայմանագրերի մասին ակտի բաժին 1/Ա(1030/2004), Խորվաթիա, հոդվ. 110, Հունգարիա, հոդվ. 87Ա, 89, Մակեդոնիա, հոդվ. 108, Ռումինիա, հոդվ. 56, Սերբիա, հոդվ. 175, Շվեդիա, Աշխատանքային իրավունքների պաշտպանության մասին ակտի բաժին 5Ա եւ այլն) հստակ սահմանվում է, որ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրից բխող իրավահարաբերությունները վերաբերում են մինչև կենսաթոշակային տարիքին: Այս շրջանակներում է նաեւ դիտարկվում տարիքի հետ կապված խտրականության դրսևորման անթույլատրելիությունը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 59-րդ հոդվածը նախատեսում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման 20-ից ավելի հնարավոր իրավիճակներ, որոնց թվում շեշտվում է, որ կենսաթոշակային տարիքի անձանց հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Վեճի առարկա նորների առնչությամբ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ տարբեր երկրների օրենսդրական ու իրավակիրառական փորձի ընդհանրացման արդյունքում 33 սահմանադրական դատարանը հանգում է հետևյալին.

■ մինչև կենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրերի կնքումը բացառության դրսևորում է եւ պայմանավորված է աշխատանքի բնույթի որոշ առանձնահատկություններով, ինչը պետք է օրենքով առավել հստակ նախատեսված լինի եւ չթողնվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությանը,

■ մինչև կենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրի հիմնական ձեւն անորոշ ժամկետով պայմանագիրն է, որի գործողության դադարման հիմքերն ու կարգը պետք է նախատեսվեն օրենքով եւ որոշվեն իրավունքի ուժով, իսկ դադարեցումը պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, ինչը,

իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով, կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման բնույթը եւ պայմանները փոխվում են: Եթե մինչև կենսաթոշակային տարիքում ելակետն աշխատանքի ընտրության ազատության սկզբունքի երաշխավորումն է, ապա կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կարելի է անձի սոցիալական ապահովության խնդրի լուծումը եւ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը:

Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել մեզանում լայնորեն տարածուն գտած մի երեւույթի վրա. մեր երկրի գործատուների մեծ մասը մինչև կենսաթոշակային տարիքի անձանց հետ նույնպես կնքում է որոշակի ժամկետով պայմանագիր:

Ինքնանպատակ չենք համարում նշված հատվածից մեջբերում անելը, քանի որ հաճախ մեզանում աշխատանքից ազատման օրինակյալ պատճառ է հանդիսանում միայն տարիքը, որը, ինչպես արդեն նշեցինք, հակասահմանադրական է: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ փորձեցինք անդրադառնալ հատկապես Գորիսի եւ Կապանի քաղաքապետարանների ենթակայության հիմնարկների կենսաթոշակային տարիքի հասած անձանց աշխատանքից ազատելու դեպքերին: Մասնավորապես Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը նշեց. «Մենք քաղաքապետարանի ենթակայության հիմնարկներում աշխատող կենսաթոշակառուներին այսպես սասած բարի ճանապարհ ենք մաղթել՝ փոխարենն ընդունելով երիտասարդ մասնագետներին: Իմ նախընտրական ծրագրի կետերից մեկն էլ կադրերի երիտասարդացումն էր: Քանի որ նոր աշխատատեղ ենք կարողանում բացել, նաեւ նման ճանապարհով ենք փորձում լուծել երիտասարդների զբաղվածության հարցը, որպեսզի նրանք չլքեն մեր հայրենիքը: Այն ընտանիքներում, որտեղ սոցիալական խնդիրներ կան, աշխատանքից ազատված կենսաթոշակառուների համապատասխան մասնագետ բարեկամներին կամ ընտանիքի անդամներին ենք ընդունել աշխատանքի»:

Կապանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Նելլի Շահնազարյանն այն հարցին, թե ինչպես են կարգավորվում հարաբերությունները կենսաթոշակի տարիքի հասած աշխատողների հետ, պատասխանեց, որ լինում են դեպքեր, երբ այդ մարդիկ իրենք են դիմում գործատուին աշխատանքից ազատվելու համար: Իսկ այն մասնագետների հետ, որոնց փոխարինողներ չկան, գործատուն կրկին որոշակի ժամկետով պայմանագիր է կնքում: «Քաղաքում մի շարք մասնագիտությունների գծով համապատասխան կադրեր չունենք, եւ հորդորել են հիմնարկների տնօրեններին աստիճանաբար նոր կադրեր պատրաստել, իսկ աշխատանքի դիմող երիտասարդներին մշտապես ասում են, որ մասնագիտություն ընտրելիս պետք է հաշվի առնել տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկը», – նշում է Ն.Շահնազարյանը եւ հավելում՝ դեպքեր են լինում, որ գործատուն ինքն է խնդրում համապատասխան մասնագետ ուղարկել, բայց քաղաքապետարանի ռեզերվում նման մասնագետ չի լինում: Ն.Շահնազարյանն արձանագրեց նաեւ այն փաստը, որ հաճախ ազատված աշխատակցի փոխարեն



Կանաչապարվում, բարեկարգվում է եկեղեցու շրջակայքը

Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին օծվեց 2001-ի դեկտեմբերի 1-ին: Մարզկենտրոնն ունեցավ իր հավատի տաճարը: Սակայն նրա շրջակայքի բարեկարգումը եւ կանաչապատումը խնդրահարույց են եղել: Կարծես, սայլը տեղից շարժվում է: Օգոստոսի 1-ից սկսվել են եկեղեցու տարածքի կանաչապատման աշխատանքները: Կանաչապատումն իրականացնում է «Էկոլոգիական անվտանգության ապահովման եւ ժողովրդավարության զարգացման» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Ռաֆայել Ասրյան): Հուլիսի

տեղ, ամենայն հավանականությամբ հաջորդ հանգրվանը կլինի Բաղաբուրջի հուշահամալիրը:

«Խուստուփ» բնապահպանական իկ-ի նախագահ Վլադիկ Մարտիրոսյանը, ով ծրագրի խորհրդատուն է, տեղեկացրեց, որ եկեղեցու ձախակողմյան հատվածում՝ դատարանի շենքի հարեւանությամբ եւ հետմամասով, կտնկվեն մշտադալար, փշատերեւ ծառեր, լինելու են սիգամարգեր, իսկ անցողիկները սալահատակվելու են: Ի դեպ, եկեղեցու տարածքում բարեկարգման աշխատանքներ է կատարել «Ռազ բիլդինգ» ՍՊ ընկերությունը (նախագահ՝ Գեորգ Փարսյան):

Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեթոյանը նկատեց, որ նման աշխատանքները վաղուց պիտի կատարված լինեին,



Ռաֆայել Ասրյան, «Էկոլոգիական անվտանգության ապահովման եւ ժողովրդավարության զարգացման» իկ նախագահ

27-ին Կապանի քաղաքապետարանը փոխընթացման հուշագիր կնքեց «Էկոլոգիական անվտանգության ապահովման եւ ժողովրդավարության զարգացման» իկ-ի հետ, որ ստորագրել են քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ իկ-ի նախագահ Ռաֆայել Ասրյանը:

Ըստ հուշագրի՝ Կապանի քաղաքապետարանը պարտավորվում է մասնագիտական-փորձագիտական աջակցություն տրամադրել ծրագրին՝ տարածքների նախաշնչման եւ նախագծման աշխատանքներում, ապահովել ծրագրի համաֆինանսավորումն ընդհանուր բյուջեի տասը տոկոսի չափով՝ տեխնիկայի տրամադրման եւ աշխատուժի տեսքով, աջակցել ծրագրի ողջ ընթացքին եւ ապահովել դրա շարունակականությունը:

Ռաֆայել Ասրյանի փոխանցմամբ՝ Կապանի մի քանի հատվածներում կանաչապատում է նախատեսված, իրենք որոշել են եկեղեցու տարածքը կանաչապա-



ՎԱԶԱԳԱՆ ԱՂՈՒՆՑ. «Տիրոջ զգացում ունենալը դրական արդյունքներ կտա»

Հարցազրույց Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի հետ

ԵՋ 1 ընկալությունը տնից շատ է դուրս եկել, շփվել իրար հետ: Ինձ համար առաջին ձեռքբերումը քաղաքի բարոյա-հոգեբանական մթնոլորտի ավելի առողջացումն է: Որովհետև ոչ միայն Գորիսում, այլև հանրապետությունում դա լուրջ խնդիր է: Համոզված եմ՝ սոցիալական ցանցերը հանգեցրել են նրան, որ մարդիկ հիմնականում հաղորդակցվում են համացանցով, իսկ նախկին անմիջական շփումը, իրար հետ հանդիպելը աստիճանաբար հուշ են դառնում: Չգտել եմ ժողովրդին տնից հանելով, նրանց անմիջական շփումը կազմակերպելով՝ վերադառնալ իրեն ավանդույթների, ինչը, կարծեք, ստացվել է:

Բայց նաև ասեմ, որ համայնքի առջև ծառայած խնդիրները բազմազան են բազմաբնույթ են: Երբ կշեռքի մի նժարին դնում ենք հնարավորությունները, մյուս նժարին՝ ցանկությունները, վերջիններս բազմակի գերակշռում են: Բայց առկա հնարավորությունները որքան էլ սուղ են, չենք հրաժարվում մեր առջև դրված խնդիրներն իրականացնելուց, մեր ամենօրյա պարտականությունները՝ կապված աղբահանության, սանմաքրման, բարեկարգման, փողոցային լուսավորության ապահովման և թափառող շենքի վերացման հետ, հնարավորինս ձգտում ենք կատարել: Եվ այս ոլորտում, թող ինքնագովազդ չլինի, տեղաշարժը տեսանելի է:

– Այնուամենայնիվ, ո՞րն է ըստ Ձեզ համայնքի առջև ծառայած ամենասուր խնդիրը:

– Կարող է զարմանալի թվալ, բայց այս փուլում կարևորն այն

է, որ ժողովրդի մեջ սերմանել ենք գաղափարը, որ արվածի չափ համահավասար կարելու է արվածի պահպանումը, ինչպես նշեցի վերելում: Որ յուրաքանչյուր ոք քաղաքին վերաբերվի այնպես, ինչպես իր տան բակին, իր սեփական տարածքից չտարբերի և չաղտոտի քաղաքը: Այսպիսի մի միտք կա. քաղաքն ակնհայտ է դառնում ոչ թե մաքրելով, այլ չաղտոտելով: Ցավոք, մեր որոշ քաղաքացիների կենցաղավարման կուլտուրան հեռու է բավարար լինելուց: Ահա, տեսնում եք այս վերակառուցված հրապարակը (խոսքը Գորիսի Տաթևացու հրապարակի մասին է, որ երևում է քաղաքապետի աշխատասեյակից. ծանոթ խմբ.), երբեմն տեսնում եմ՝ նստած գրուցում են, աղբարկղը կողք դրած, արեւածաղիկ սերմերի կեղեւները թափում են ոտքերի տակ: Այ սա չպիտի լինի:

– Խնդրեմ, ներկայացրեք Գորիս քաղաքի տեղական բյուջեն, նրա ձեւավորման բաղադրիչները:

– Տեղական բյուջեն շատ սուղ է, ինչը ստիպում է, որ մեր ծրագրերը սեղմենք, պատկերավոր ասած՝ մեր գոտիները ձգենք: 2015թ. բյուջեն 484 մլն դրամ է՝ նախորդ տարվա 440 մլն դրամի փոխարեն: Բայց նաև ասեմ, որ ձգտում ենք տեղական եկամուտների հոսքերն ավելացնել, որը մեզ հաջողվում է, բայց նաև վիճակագրական ոչ ուրախացնող մի թիվ ունենք. տեղական եկամուտները բյուջեի 16-17 տոկոսն են կազմում, ավելի շատ լրավճարներ ենք ստանում: Որքան էլ փորձում ենք սեփական եկամուտներն ավելացնել, այնու-

մենայնիվ, բյուջեի հաշվեկշռում մեծ տեղ չունի: Սեփական եկամուտները հիմնականում գոյանում են հողի հարկից, գույքահարկից, նաև տեղական տուրքերից: Առաջին երկուսի մեծ բազա չունենք, ինչով էլ պայմանավորված տեղական բյուջեի սուղ լինելը:

– Որքա՞ն է Գորիս քաղաքի բնակչությունը:

– Վերջին մարդահամարի տվյալներով 23 հազարից մի քիչ ավելի:

– Սրանից բխող մի հարց. իսկ ինչպիսի՞ն է զբաղվածության վիճակը Գորիսում:

– Խիստ մտահոգող հիմնախնդիր է դա մեզ համար: Այս պահին ձեռքիս տակ չունեն բնակչության զբաղվածության վերաբերյալ վերջին թվական տվյալները, բայց վիճակը միաբարակ է: Մենք մեծ արդյունաբերական ձեռնարկություններ չունենք, այսօր Գորիսի բնակչության մեծ մասը զբաղված է գյուղատնտեսությամբ և արհեստագործությամբ, ինչպես բոլոր ժամանակներում է Գորիսի բնակչությունը զբաղված եղել, նաև հյուրիարկության տնտեսությամբ: Լուրջ արտադրական հզորություններ չունենք: Սա է խնդիրների խնդիրը:

– Մեր նախորդ հարցազրույցում եւս շոշափեցինք Վարդապետի գետի հունի մաքրման հարցը, որը մի հսկա հակասանհրապարակային օջախի է վերածվել, այդտեղ ոչ միայն կենցաղային աղբն են նետում, այլև կոյուղաջրեր են թափվում:

– Շատ լուրջ է ցավոտ խնդիր շոշափեցիք: Բազմաթիվ միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Համաշխարհա-

յին բանկի հետ բանակցություններ են վարվում: Որպես գերակա շահ՝ ընտրել ենք Գորիսում տուրիզմի զարգացումը, մշակվել է ծրագիր, որում առաջնահերթ տեղ ենք տվել Վարդապետի գետի հունի մաքրմանը, ափամերձ տարածքների բարեկարգմանը: Համաշխարհային բանկն իր ծրագրերի մեջ մտցրել է Գորիսի զբոսաշրջիկների նորոգումը: Հաջողական քայլերի մեջ, կարծում եմ՝ կներառվի Վարդապետի գետի հունի մաքրումը: Չեմ բացքնում, որ դա լուրջ ներդրումներ է պահանջում, բայց հուսով եմ, այս հրատապ խնդիրն կարող ենք անդրադառնալ Համաշխարհային բանկի ծրագրերով, քանզի տեղական բյուջեի սուղ միջոցներով հազիվ թե մի բան ստացվի: Գործը գլուխ կգա միայն ներդրումների միջոցով:

– Մեր ունեցած տեղեկություններով խնդրահարույց է մնում նաև աղբավայրի հարցը:

– Մենք եվրամիության մի օրագրի ենք մասնակցում միավորվող համայնքների շրջանակում: Գորիսի, Սիսիանի փնջերը միասին ծրագիր են ներկայացրել, առաջին փուլն անցել ենք, այդ ծրագրի շրջանակում նախատեսվել ենք Գորիսում և աղբատար մեքենա ձեռք բերել, պլաստիկ աղբարկղեր հայթայթել, ու նախատեսվել աղբավայրի ցանկապատում և այլն:

– Հաճե՞լի է տեսնել, որ Գորիսի Տաթևացու հրապարակի վերակառուցում-բարեկարգումն ավարտին է հասցվել: Քիչ բնակավայրեր կարող են հպարտանալ ման ակնհայտ հրապարակով:

– Հրապարակի ավարտում տեսքի համար ուզում եմ շնորհակալություն հայտնել հովանավորին՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, ում անձնական ներդրումներով հրապարակը կառուցվեց: Նաև կուզեմ ավելացնել, որ Սյունիքի մարզպետի հովանավորությամբ Մեծ հայրենականում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի տարածքում կառուցվում է Արցախյան պատերազմի նահատակներին նվիրված հուշարձան: Ի դեպ, Գորիսի Տաթևացու հրապարակի շինարարության ամբողջացման մեջ ներդրում ունի «Ձանգեզուրի պղնձամուղիբեդեային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը, ինչի համար շնորհակալություն են հայտնում ձեռնարկության տնօրենությանը:

– Համաձայն եք կարծիքին, որ Գորիսի երբեմնի ինքնատիպ ճարտարապետական դեմքը աղավաղվում է:

– Եթե մյուս բնակավայրերում մնան երեւոյթ առկա է, ապա կասեմ, որ Գորիսի դեպքում տեղին չէ: Եղածը գրեթե ամբողջությամբ պահպանվել ենք: Դա նաև մասնագետների կարծիքն է: Մի քանի ծրագրեր կան, որ Գորիսը մրցույթով շահել է. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական համաժողովի և Ավստրիական Միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության հետ համագործակցության շրջանակում ՀՀ քաղաքաշինության նախարարության աջակցությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել Գորիսում իրականացնել «Խելացի քաղաքային լուծումներ» անցումային և զարգացող երկրների համար» պիլոտային ծրագիրը: 2015թ. հուլիսի 22-ին Գորիսը դարձել է «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ, որի հիմքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաժողովի՝ համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանման հռչակագիրն է: Հենց այս ծրագրերում հարթելու կռիվներ են Գորիսի պահպանված ճարտարապետական տեսքը: Նաև դրա շնոր-

հիվ ուզում ենք Գորիսում տուրիզմը զարգացնել, քանզի աշխարհին ցույց տալու բան ունենք:

– Գորիսում, եթե չենք սխալվում, ծայրամասային թաղամասերը կենտրոնի հետ կապող ճանապարհահատվածները բարեկարգելու խնդիր կա, մանավանդ Ավանգարդ թաղամասը, որ ուսանողական թաղամաս է: Այդ մասին մեկ անգամ եւս բարձրաձայնվեց վերջերս կայացած կրթության աշխատողների օգոստոսյան խորհրդակցության ժամանակ:

– Ուզում եմ առիթն օգտագործել և ուրախ լուր հաղորդել բնակչությանը, նաև շնորհակալություն հայտնել կառավարությանը, որի ծրագրերի մեջ մտցվել է Ավանգարդ թաղամասի բարեկարգումը, արդեն նախագիծը պատվիրվել է, Ավանգարդ թաղամասի, Մամիկոնյան փողոցի և Վանքի տափ թաղամասի բարեկարգման նախագծային աշխատանքներն արդեն ավարտին են հասնում, առաջիկայում շինարարական կազմակերպությունն ընտրելու մրցույթ կհայտարարվի: Միաժամանակ հայտնեմ, որ թաղամասերի միջև տրանսպորտային կապը բարելավելու նպատակով առաջիկայում կազմակերպվելիք մրցույթով տրանսպորտի կազմակերպությունների առջև պայման ենք դնելու երթուղային միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով: Նախկին երթուղիները փոխվել են, սեպտեմբեր ամսվա ընթացքում մրցույթ է նախատեսված, արդեն ավտոբուսներ կան երթուղիներում, շատ շուտով գործիքները տուն կհասնեն ավելի հարմարավետ պայմաններում:

– Քույր քաղաքների հետ բարեկամությունն ի՞նչ է տալիս Գորիսին: Ինչպես երևում է քաղաքապետարանի աշխատանքների հաշվետվությունից, փոխաջեղություններից գատ՝ գործն այն կողմ չի անցնում:

– Ճիշտ էր: Մի քանի օր առաջ Վիեննի քաղաքապետ Տիերի Կովակսի հետ զրույց եմ ունեցել մեկ ժամից ավելի և նույն բանն էի պնդում, որ փոխաջեղություններից պիտի անցնենք գործնական հարաբերությունների դաշտ, թեև Վիեննի հետ մեր բարեկամությունը գործնական շփման ապացույցներ ունի, բազմաթիվ ծրագրեր են իրականացվել. մեր կեղեցիկ ենք համատեղ վերականգնել, Գորիսի հիվանդանոցին է օգնություն ցուցաբերվել, զգալիորեն բարեկարգվել է Գորիսի առողջապահական համակարգը թե՛ բժշկատեխնիկական, թե՛ կադրերի վերապատրաստման առումով: Օգնություն է ցուցաբերվել Գորիսի փրկարար ծառայությանը, համագործակցություն կա մշակութային, սպորտային և պատմամշակութային ժառանգության պահպանման ոլորտներում: Ասեմ, որ քարանձավների վերականգնման ծրագիր ունենք, մենք մաքրման աշխատանքներն արել ենք, իրենք վերականգնումը պիտի ֆինանսավորեն: Այս տարվա նոյեմբերին Գորիսի պատվիրակությունը կլինի Ֆրանսիայում, նախատեսվում է առաջիկա երեք տարվա համագործակցության պայմանագիրը բարձրացնել: Բելառուսում եղել ենք 2015թ. հուլիսի 1-3-ին՝ մասնակցելով Բելառուսի հանրապետության տոնին և Գորիսի քույր քաղաք Նեսվիժի օրվան նվիրված միջոցառումներին: Այնտեղ առաջարկ եմ արել մեր փոխարաբերությունները տեղափոխել գործնական դաշտ, արդեն պայմանավորվածություններ կան, բելառուսական Նեսվիժ քաղաքն ունի համագործակցության փորձ բազմաթիվ քույր քաղաքների հետ, որոնց հետ համատեղ ծրագրեր ունեն արված, փոր-



միջնակարգ դպրոցների հիմքի վրա դպրոցականների ամառային արձակուրդի օրերին գործում են բակային ճամբարներ: Այս տարի երեք հերթափոխով ճամբարում ամառային արձակուրդն անցկացրեց 1215 դպրոցական: Օրվա խորհրդին պատշաճող խոսք ասաց Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանը. «Միայն աշխատանքի վետերանները կարող են ականատեսի աչքերով պատմել, թե ինչ է կատարվել այս լեռնաշխարհում 57 տարի առաջ: Մենք միայն պատկերացնում ենք, թե մոտ վեց տասնամյակ առաջ ստեղծագործ, հայրենասեր, հայրենամուկներ, լեռնագործ մարդիկ ինչպես են մաքրել այս լեռների վրա: Եվ արդյունքում այսօր ունենք գողտրիկ մի քաղաք, հայապատ գործունեություն իրականացնող հսկա ձեռնարկություն: Ցանկություն է՝ հիշել բոլոր այն մարդկանց, ովքեր քարը քարի վրա դնելով՝ ստեղծել են հսկա այդ ձեռնարկությունը: Փառք այդ աշխատավոր մարդկանց, ովքեր, ավաղ, չկան, բայց կենդանի են նրանց սերունդները, նրանց թոռները, որ այս ճամբարականներն են: Ի դեմս նրանց, վստահ են, որ մեր քաղաքը հուսալի ձեռքերում է: Պատեհ առիթ է երախտագիտությունս հայտնելու Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի ողջ անձնակազմին: Քաջարանցի կռվեց ոչ միայն Մեծ հայրենականի ռազմադաշտերում, այլև Արցախյան գոյամարտում: Հավերժ փառք երկրորդ աշխարհամարտում և մերօրյա ազատամարտում ընկածների հիշատակին»:

Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Դեբոյանը եւս իր բարեմաթանքի խոսքը հղեց քաջարանցիներին. «Մաղթում են, որ ձեզ երբեւէ չլքեն քաջությունն ու արարելու կարողությունը. »

Յերթական անգամ Քաջարանի երկինքը երփներանգվեց փոնական հրավառության գույներով

էին, որ կանգնի կոմբինատը, նա եզակի մասնագետն էր, ում կարծիքով հանրապետության արդյունաբերական ամենախոշոր ձեռնարկությունը պիտի գործի և չընդհատի իր ռիթմը: Իսկ երբ կոմբինատը հարկադրաբար պարապլուրդի մատնվեց, նա մտահոգությունն ուներ և հասավ դրան, որ կոմբինատից մի հեղույս չպակասի: Իսկ երբ հետո կոմբինատը վերագործարկվեց, դա եղավ նաև այն բանի շնորհիվ, որ ձեռնարկության արտադրանքը բանուն չէր տրվել և պահեստավորվել էր, և դրա իրացումից գոյացած գումարով հնարավոր եղավ երկրորդ շունչ հաղորդել ձեռնարկությանը», - ասաց կոմբինատի տնօրենի նախկին տեղակալ Լեւոն Արզումանյանը:

Տոնակատարությունը սկսվեց Արցախյան գոյամարտում ընկած քաջարանցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրից, որտեղ տոնի մասնակիցներին միացան «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական

ընկերության գլխավոր տնօրեն Նիկ Ստիվենսոնը, ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Նարեկ Ամբարյանը, կոմբինատի աշխատակազմի ներկայացուցիչներ, Կապանի քաղաքապետ Աշոտ Չայրապետյանը, Սեդրու քաղաքապետ Արշավիր Գովհաննիսյանը, Արցախյան գոյամարտի քաջարանցի մասնակիցներ, տարբեր զբաղմունքի և տարիքի մարդիկ: Արցախյան գոյամարտում 40 քաջարանցի է զոհվել, որից 24-ի մարմինն ամփոփված է քաղաքի եղբայրական գերեզմանում: Տոնակատարության մասնակիցները ծաղիկներ դրեցին նրանց շիրիմներին: Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Դեբոյանը կատարեց հոգեհանգստյան արարողակարգ:

Այնուհետև տոնակատարության մասնակիցները տեղափոխվեցին Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի հրապարակ, որտեղ տեղի ունեցավ քաղաքի դպրոցներում կազմակերպված բակային ճամբարների փակման արարողություն: Արդեն չորրորդ տարին է՝ Քաջարանի թիվ 1 և 2

Տոնակատարության մասնակիցների խոսք



Վարտանու Գեորգյան

Հայրենական մեծ պատերազմի մասնակից

Աչք են բացել Քաջարանում, և գիտակցական ողջ կյանքս անցել է այստեղ: 92 տարեկան եմ: Աշխատանքային գործունեությունս սկսել եմ այն ժամանակ, երբ երկրաբանները Գանձասարի վրա հայտնաբերել էին պղնձի և մոլիբդենի խոշոր հանքավայր, աշխատեցի հանքաքարի ուսումնասիրությամբ զբաղվող լաբորատորիայում, բայց սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, իմ հասակակիցների հետ մեկնեցի ռազմաճակատ, մարտերով հասա մինչև Բեռլին: Հաղթանակով վերադարձա և մտա կոմբինատ: Աշխատեցի տարբեր տեղամասերում, հետո ընտրվեցի արհկոմի նախագահ, հետո կրկին աշխատել եմ ֆաբրիկայում որպես պետի տեղակալ տնտեսական գծով և 1992 թվականին անցել կենսաթոշակի: Շնորհակալ եմ քաղաքապետարանին և կոմբինատի ղեկավարությանը, որոնք վերջերս նախաձեռնեցին և տոնեցին իմ 90-ամյակը: Ուրախ եմ, որ կրկին հավաքվել ենք և նշում ենք մեր քաղաքի 57-րդ տարեդարձը: Այսպիսի միջոցառումներով պահպանվում է սերունդների կապը:



Էլեն Համբարձումյան

Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողուհի

Այս ամռանը մասնակցել եմ «Ուսանողական ամառ-2015» փառատոնի ծրագրով անցկացված միջոցառումներին, որ նախաձեռնել է կազմակերպել է «Անդրկ Սյունի» հասարակական կազմակերպությունը: Նաև շնորհակալ եմ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատին՝ փառատոնը հովանավորելու համար: Փառատոնի շրջանակում այցելեցինք Լեռնային Ղարաբաղ, եղանք պատմամշակութային վայրերում՝ Գանձասար վանական համալիր, Շուշիի Սուրբ Դազան-չեցոց Ամենափրկիչ եկեղեցի: Գործիսում այցելեցինք Խնձորեսկի ճոճվող կամուրջ, Մխիթար Սպարապետի գերեզման, Ակսել Բակունցի տուն-թանգարան: Մի խոսքով, փառատոնի մասնակիցներիս ամառային հանգիստը հետաքրքրությամբ անցավ, և թարմացած, կազդուրված առաջին անգամ ոտք կրեմե ուսանողական լսարանի շենին:



Հովհան Իսրայելյան

Ճանաչված լեռնագործ

Յուրաքանչյուր տոն, մեծ, թե փոքր, միավորում է մեզ, համախմբում, հնարավորություն ընձեռում, որ հանդիպենք իրար, մտքեր փոխանակենք, կտրվենք առօրյա հոգսերից: Իհարկե, հաճելի է տեսնել, որ այս հրապարակում հավաքվել են տարբեր սերնդի անձինք, տարբեր պաշտոնի և զբաղմունքի մարդիկ: Կցանկանայի ընդգծել, որ Քաջարանը հարուստ է ոչ միայն ընդերքով, այլև իր մարդկանցով՝ աշխատասեր, նվիրված իր հող ու ջրին: Ամեն ինչ չէ, որ հարթ է մեր կյանքում, հանրապետությունում դժվարություններ շատ կան: Ուրեմն նման առիթներ թող պլելի շատ լինեն, պատանիներն ու աղջիկներն ուրախանալու պահեր շատ ունենան: Նման միջոցառումների ժամանակ մարդիկ մոռանում են ցավն ու հոգսը: Ուզում եմ նշել, որ օրավուր Քաջարանն ավելի մաքուր ու կոկիկ է դառնում, ինչը պատշաճում է նման տոներ անցկացնելուն:





որով օժտված եք, որ կարողանաք ի գործ դնել ձեր բոլոր կարողություններն ու ունակությունները հայրենի քաղաքի բարօրության ու բարգավաճման գործին, որ կարողանանք Քաջարանը տեսնել ավելի զեղեցիկ, ավելի խնամված եւ ավելի լուսավոր»:

Տոնի առթիվ քաջարանցիներին շնորհավորանքի խոսք հղեց Այոնյացի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը: Իսկ N գործարանի հրաձգային գումարտակի զինվոր, կրտսեր սերժանտ Խաչիկ Խաչատրյանն իր ելույթում ասաց, որ ճակատագրի բերումով իրենց բախտ է վիճակվել պաշտպանել Այոնյաց լեռները, դրանց փեշերին ծվարած գողտրիկ Քաջարան քաղաքը: Նաեւ նշեց, որ քաջարանցիների ջերմ վերաբերմունքն իրենց պարտավորեցնում է ավելի աջալուջորեն կատարել ծա-

ռայողական պարտականությունները, պաշտպանել պետական սահմանը, բնակչության խաղաղ անդորրը:

Քաղաքի տոնին ճամբարականները, «Ուսանողական ամառ-2015» փառատոնի մասնակիցները, զինծառայողները հանդես եկան համերգային ծրագրով: Միջոցառման ավարտին մի խումբ դպրոցականներ, ճամբարի մանկավարժներ արժանացան շնորհակալագրի: Իսկ երեկոյան Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի հովանավորությամբ Քաջարանի մարզադաշտում տեղի ունեցավ տոնական համերգ՝ Երեւանից ժամանած երգիչ-երգչուհիների մասնակցությամբ: Ավելի ուշ Քաջարանի երկինքը երփնեհանգվեց տոնական հրավառության գույներով:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆՅԱՆ

Սեպտեմբերի 5-ին Կապանի Արամ Մանուկյան փողոցում դռները բացեց ժամանցային-առողջարարական «Ֆենիքս» համալիրը: Շինաշխատանքներն իրականացրել է «Տիմո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Մախազահ՝ Արտուր Աթայան): Առանձին աշխատանքներ կատարելու համար մասնագետներ են հրավիրվել մայրաքաղաքից: «**Երբ քաղաքապետ էի, զգացի, որ քաղաքին լողավազան է անհրաժեշտ,** – ասում է կենտրոնի հիմնադիր, Կապանի նախկին քաղաքապետ Արտուր Աթայանը, – **ծանրութեթե արեցի լողավազան կառուցելու բոլոր տարբերակները, մտածեցի, որ դա նաեւ լավ բիզնես է եւ չսխալվեցի:** Ինձ համար զոնե անսպասելի էր երեխաների այս հոսքը, ովքեր ցանկանում են լողով պարապել: Բացի երկրորդ հարկում կառուցված լողավազանից, որ սպասարկելու է տարբեր տարիքի մարդկանց, նախատեսում ենք առաջին հարկում եւս մի լողա-



Ժամանցային-առողջարարական նոր կենտրոն Կապանում



Արթուր Աթայան, կենտրոնի հիմնադիր, Կապանի քաղաքապետ 2008-2012թթ.



վազան, որտեղ լող կուսուցանեն երեխաներին, եւ ավելի շատ մարզական թեքում կունենան»:

Համալիրը հրավիրել է չորս մարզիչ, ովքեր կաշխատեն եւ մեծահասակների, եւ երեխաների հետ: Արդեն ձեւավորված են երեխաների խմբերը, որտեղ ընդգրկված է 20-ական հոգի: Ըստ ամենայնի դրվում են Կապանում լող մարզածելի ուսուցման եւ մասսայականացման հիմքերը: Լողալ ցանկացողները համալիր կայցելեն բուժզննում անցնելուց եւ բժշկական տեղեկանք ունենալուց հետո:



Այստեղ առայժմ աշխատում է 23 հոգի, եթե ամբողջությամբ սկսի գործել, աշխատողների թիվը կհասնի 55-ի: Ընդ որում՝ աշխատողների մեծ մասը կին է: Հետաքրքրվեցինք նաեւ լողի համար նախատեսված տոմսերի գնով: Մեր գրուցակիցը կոնկրետ թվեր չասաց, բայց փոխանցեց, որ դրանք մոտավորապես 30 տոկոսով էժան կլինեն մայրաքաղաքի լողավազանների գներին:



Առայժմ համալիրի այցելուները կօգտվեն լողավազանից եւ սրճարանից: Համալիրում գործելու են նաեւ մարզումների, զեղեցկության եւ մերսուլների սրահներ, հյուրանոց, խանութներ, մանկական զվարճանքի կենտրոն: Ի դեպ, համալիրի տնօրենությունն ըստ ամենայնի հոգացել է Կապանի փոքրիկ բնակիչների մասին: Մանուկները կօգտվեն կարուսելից, կզբոսեն իրենց համար նախատեսված պուրակում: Համալիրում շարունակվում են շինաշխատանքները, ամբողջաճանում է մանկական զվարճանքի կենտրոնը, մեր գրուցակիցը չմանրամասնեց հետագա անելիքները, բայց հավելեց, որ մանուկների համար կլինեն անակնկալներ:

Ճաշակով կառուցապատված ու կանաչապատված է համալիրի շրջակայքը, որի կենտրոնում շատրվան է:

Երեկոյան կողմ աշխույժ եւ մար-

դաշատ էր համալիրի տարածքը: Նրա շահագործման մեկնարկին ներկա էին ոչ միայն Արամ Մանուկյան փողոցի, այլեւ մարզկենտրոնի տարբեր թաղամասերի բնակիչներ: Բոլորն էլ զարմացած էին, թե նախկին լքյալ եւ անհրապույր տարածքը ժամանցի եւ սպորտի ինչ կենտրոնի

կարող է վերածվել: Նվազախումբը երգեր ու աշխույժ պարեղանակներ էր հնչեցնում, փոքրիկներն անմոռաց պարում էին, մեծահասակները զբոսնում էին շատրվանի շուրջը կամ օգտվում բացօթյա սրճարանի ծառայությունից:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆՅԱՆ



Արակ Արահամյան

«Անդոկ Այոնի» հասարակական կազմակերպության նախագահ

Ամռան տարեշրջանում ԶՊՄԿ հովանավորությամբ եւ Քաջարանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ անցկացվեց «Ուսանողական ամառ-2015» փառատոնը: Համերգային ծրագրով օգոստոսի 11-ին տեղի է ունեցել փառատոնի բացումը: Երբ է կազմակերպվել զոհված ազատամարտիկների հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք է մատուցվել մերօրյա նահատակների հիշատակին, մարզական օր էր հայտարարվել, նաեւ այց կազմակերպվեց N գործարան: Կարծում են փառատոնի մասնակիցների հիշողության մեջ թարմ կմնան այցելությունը Լեռնային Ղարաբաղ եւ Գորիս, ծանոթությունը պատմաճակատային հուշարձաններին, ինչպես նաեւ երկօրյա վրանային դեսամոտը «Գանձասար» մանկապատանեկան ճամբարում: Անցկացվեց նաեւ ինքնակառավարման օր, երբ ուսանողներն իրենց ձեռքն էին վերցրել քաղաքի կառավարումը: Աչքի ընկած ուսանողները կարծանանան հուշանվերների: «Ուսանողական ամառ-2015» փառատոնին այս անգամ մասնակցեց 90-ից ավելի պատանի ու աղջիկ:



Հովիկ Մարգարյան

Արցախյան պատերազմի մասնակից

2015-ը հորեկյանական չէ մեր քաղաքի համար, բայց, ինչպես տեսնում եք, փոքրով ու մեծով նշում ենք քաղաքի օրը: Քանզի օգոստոսի 21-ին է Քաջարանը քաղաքի վկայական ստացել: Քաջարանում յուրաքանչյուր տոն թե հիշատակի օր էրթը սկսվում է զոհված ազատամարտիկների հուշահամալիրից: Այսօր եւս բացառություն չէ: Այստեղ ննջում են մեր մարտական ընկերները, որոնց հիշատակը պիտի վառ պահվի: Քաջարանցի ազատամարտիկներն Արցախյան պատերազմում իրենց արժանապատվորեն դրսևորեցին՝ նախ սահմանամերձ գյուղերում մարտական հերթապահություն իրականացնելով, հետո մասնակցելով ռազմական գործողությունների: Մերօրյա ազատամարտում Քաջարանը 40 զոհի ունեցավ, այսօր էլ եկել ենք գլուխ խոնարհելու նրանց սուրբ հիշատակի առջեւ:

Դարձի՛ր ուսանող, շենագրո՛ւ երկիրդ

Շուշի քաղաքն այս տարի կուսակցական նոր կրթօջախ: Սեպտեմբերի 19-ին տեղի կունենա «Եզնիկ Սոցյան» արհեստագործական ուսումնարանի պաշտոնական բացման արարողությունը:

Կրթօջախը կառուցվել է ֆրանսահայ բարերար Եզնիկ Սոցյանի կտակած գումարներով և կրուն է նրա անունը: Նորաստեղծ ուսումնարանը նախատեսում է Արցախի և Հայաստանի երիտասարդների համար ժամանակակից, ամենարդյունավետ ուսումնական մեթոդներով լիարժեք մասնագիտական կրթություն: Ուսուցման առաջին իսկ օրվանից ուսանողներն ապահովված են լինելու աշխատանքով: Ասել է թե

նրանց ուսուցումը երկակի բնույթ է կրելու. ուսանողները հարաբերությունների մեջ են լինելու ուսուցողական ձեռնարկության հետ և միաժամանակ ուսանող են լինելու արհեստագործական ուսումնարանում, և, ինչպես ֆրանսահայ բարերարն էր նշում. «Արհեստ ունեցող երիտասարդն անոթի չի մնա»: Նորաստեղծ ուսումնարանն ունի նաև պաշտոնական կայքէջ (www.epym.net), որտեղից դիմորդները կարող են ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը:

Ուսումնարանի աշխատակազմը վերջերս այցելել էր Քաջարան քաղաք, հանդիպել Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանի և Քաջարանի պետական արհեստագործական ուսումնարանի տնօրեն Արամայիս Առաքելյանի հետ: Հանդիպման ընթացքում եղավ կարծիքների և աշխատանքային

փորձի փոխանակում: Քաղաքապետի առաջարկությամբ օգոստոսի 21-ին՝ քաղաքի ծննդյան օրը, երկու ուսումնարանի միջև կնքվեց համատեղ աշխատելու և գիտական փորձ փոխանակելու ծրագիր: Ուսանողների առօրյան փոքր-ինչ հետաքրքիր դարձնելու համար որոշվեց նաև ուսումնարանների միջև պարբերաբար կազմակերպել մրցույթներ և հետաքրքիր միջոցառումներ: Հավելենք նաև, որ նորաստեղծ ուսումնարանն ապահովվելու է անվճար կրթություն, ուսանողները ստանալու են կրթաթոշակ, ապահովված են լինելու հանրակացարանով, ճաշարանով, գրադարանով, մարզասրահով, տրանսպորտով, հատուկ համազգեստով, ժամանակակից սարքավորումներով և գործիքներով:

ԶՄԻՆԵ ՀԱՄԱՐԱԶՈՄՅԱՆ

Կվերանորոգվի Սերո Խանզադյանի փունթանգարանը

Օգոստոսի 6-ին Գորիսի Գ.Աշոտի անվան մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ս.Խանզադյանի տուն-թանգարանի վերանորոգման հետ կապված հարցեր: Հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրին նախատեսվող աշխատանքների ցանկը: Ծրագրի վերջնական հաստատումից հետո կսկսվեն աշխատանքները, որոնց ընթացքում կվերանորոգվեն տուն-թանգարան տանող ճանապարհը, շենքն ամբողջությամբ:

ԱՐԵՎԻԿ ԱՐԵՆՅԱՆ



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայտարարվում է մրցույթ **ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասավարի (16 դասաժամ), դասավարի (16), դասավարի (18), պատմություն (11.5), հայոց լեզվի և գրականության (14), մաթեմատիկայի (20) ուսուցչի թափուր տեղերի համար:**
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չե 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Չե 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 15-ին ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Կապանի N6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան, Մուշեղ Հարությունյան 5ա:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 2-37-83 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայտարարվում է մրցույթ **ՀՀ Սյունիքի մարզի «Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմություն (17.5 դասաժամ), ֆիզիկա (8.75 դասաժամ), 2 դասավար(10 ժամ), ֆիզկուլտուրա (11 ժամ), ռազմագիտություն առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:**
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չե 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Չե 4),

4. Ինքնակենսագրություն (Չե 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 02.10.2015թ. ներառյալ, ամեն օր ժամը 10.00-15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 07.10.2015թ. Ծավի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Ծավ:
Տեղեկությունների համար զանգահարել 094 013020 հեռախոսահամարով:

ԽՈՍՔ ՎԻՇԱՏԱԿԻ Քոչար Դավթյան

Սեպտեմբերի 3-ին 58 տարեկան հասկուն երկրային կյանքից անժամանակ հեռացավ հայտնի պետական, քաղաքական, հասարակական գործիչ Քոչար Ապրեսի Դավթյանը:



Ծնվել է 1957թ. փետրվարի 27-ին Սիսիան քաղաքում: 1981թ. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ստացել ինժեներ-հիդրոտեխնիկի որակավորում:

1981-1984թթ. աշխատել է «Հայպետջրնախագիծ» ինստիտուտի ջրամբարների բաժնում՝ ինժեներ:
1984-1987թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի «ՎՈՂԳԵՆ» գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

1987-1990թթ. աշխատել է Երեւանի ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտում՝ գիտաշխատող:
Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների:

1990թ. հոկտեմբերին ընտրվել է Սիսիանի շրջանային և քաղաքային խորհուրդների պատգամավոր ու մշտական բնակության տեղափոխվել Սիսիան:
1990-1994թթ. գլխավորել Սիսիանի «Սյունիք» ձեռնարկությունը:

1994թ. ընտրվել է Սիսիանի շրջանային խորհրդի նախագահ՝ այդ պաշտոնը վարելով երեք տարի:
1995-1999թթ. եղել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, «Հանրապետություն» պատգամավորական խմբակցության քարտուղար, Աժ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

1996-1999թթ. զբաղեցրել է Սյունիքի մարզային ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:
1999-2012թթ. եղել է «Սյունիք» ՍՊ ընկերության տնօրեն:
Քոչար Դավթյանը 1988 թվականից ի վեր Ղարաբաղյան շարժման ամենակտիվ մասնակիցներից ու կազմակերպիչներից էր: Ղարաբաղյան շարժման քաղաքական կառույցի՝ Հայոց համազգային շարժման (ՀՀԿ) հիմնադիր անդամներից էր: 1997 թվականից քաղաքական այդ ուժի ղեկավար մարմնի՝ վարչության անդամ էր:

Նա ամտաբեր չէր աշխարհում և հատկապես իր կողմից անչափ սիրված Հայաստանում ու մասնավորապես Սիսիանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Քոչար Դավթյանը գույալ էր, բայց եւ զգացմունքային, միեւնոյն ժամանակ հոգատար ամենքի եւ բոլորի հանդեպ: Նա պատվով անցավ կյանքի փորձերի միջով և վաղեմից իրեն շրջապատող մարդկանց անսպառ սերն ու հարգանքը:

Անխնայ աշխատանքով և օրինակելի վարքով Քոչար Դավթյանը արժանիորեն վաստակել էր իրեն ճանաչողների անկեղծ սերն ու հարգանքը: Իր մարդկային որակներով, սկզբունքայնությամբ ու շիտակությամբ չափանիշ էր ընկերական շրջապատում: Անսահման նվիրված էր իր քաղաքական հավատամքին, ինչի իրականացմանը նվիրաբերեց իր բոլոր ուժերն ու, կարելի է ասել, կյանքը:

Հանգչիր խաղաղությամբ՝ բարի, լավ ու անշահխնդիր մարդ ու անդամակցածն ընկեր...
Մի խումբ ընկերներ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Սիեր Եղիազարյանը ցավակցում է Հայ ավետարանչական ընկերակցության Սյունիքի մարզի պատասխանատու Սարգիս Օշինյանին՝ նրա սիրելի հայրկի՝ Գուրգեն Օշինյանի մահվան կապակցությամբ:

ՇՆՈՐՀԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ Ընդհակառակը չեն հայտնում «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վիրաբուժական բաժանմունքի վարիչ, վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Լեւոն Սերգեյի Սամայանին, անեսթեզիոլոգ Մարիա Սողոմոնյանին, թերապետ Թամարա Մանուկյանին, ռենտգենոլոգ Մարաթ Քարամյանին, բուժքույրերին և բոլոր նրանց, ովքեր ջանք ու եռանդ չեն մատուցում իմ սիրելի թոռը՝ Օլյա Բաղդասարյանի լեղակարկի վիրահատության և առողջության վերականգնման գործում: Մեր օրերում դժվար է գտնել բժիշկների, ովքեր ոչ միայն իրենց մասնագիտական հմտություններով, այլև մարդկային բարձր հատկանիշներով ու հոգատար վերաբերմունքով են շրջապատում հիվանդին՝ անկախ նրա սոցիալական վիճակից:
Խորին հարգանքով՝ Կապանի բնակչուհի Վալյա Գասպարյան

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԽԱՐԳ»
ՍԱՀՄԱՏՈՒԿ ՊՍԱՍՏԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՎԿԵ ԱՆԵՍՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

«ԳՈՎԱԶԳ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՇՆՈՐՀԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ Գրանցման վկայականը՝ ՕՄՍ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական արձանագրություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Թղթակցությունները չեն գրահստվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրական՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 16.09.2015թ.: